Կարգապահական գործ թիվ ԿԳ - 16081

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի ապրիլի 04-ի թիվ 52-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/35-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԻՐԻՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տարոն Վարդանի Սիմոնյանի, Խորհրդի անդամներ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Իրինա Մանուկյանին (արտոնագիր թիվ 392) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Մետաքսյա Տեր-Պետրոսյանը **(այսուհետ՝ Դիմող)՝** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ հայտնել է, որ 2014թ. հունիսի 23-ին փաստաբան Իրինա Մանուկյանի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, իսկ 2014թ. հունիսի 25-ին փաստաբանին բանկով վճարել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, քանի որ ըստ Դիմողի՝ փաստաբանը վստահեցրել է, որ առանց ծառայության գումարի վճարման անդորրագրի չի կարող հայցը ներկայացնել դատարան:

Դիմողը հայտնել է, որ Իրինա Մանուկյանն իրեն վստահեցրել է դատական գործի դրական ավարտի վերաբերյալ, քանի որ նախապես ծանոթացել է գործին և իբր պայմանավորվածություն է ունեցել հայցը քննող դատավորի հետ: Դիմողը նաև նշել է, որ Իրինա Մանուկյանը խոստացել է իրեն, որ փաստաբանական ծառայությունների վճարի 3/4-րդ մասը հայցը բավարարվելուց հետո պետք է հետ ստանա պատասխանող կողմից և վերադարձնի Դիմողին:

Դիմողը նշել է, որ մեկ տարի տարբեր պատճառաբանություններով ձգձգելուց հետո Իրինա Մանուկյանը հայցը ներկայացրել է դատարան 2015 թվականի հունիսին:

Դիմողը հայտնել է, որ դատարանն իր հայցապահանջը մերժել է, իսկ փաստաբան Իրինա Մանուկյանը հայտնել է, որ պետք է գործը ներկայացնի

վերաքննիչ դատարանում:

Փաստաբան Իրինա Մանուկյանը թիվ ՍԴ/0829/02/15 քաղաքացիական գործով վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, սակայն այն վերադարձվել է, քանի որ ներկայացված է եղել թերություններով, իսկ վերաքննիչ դատարանը տվել է ժամկետ թերությունները վերացնելու համար, սակայն փաստաբան Իրինա Մանուկյանն այդ ժամանակահատվածում կալանավորվել է:

Դիմողը հայտնել է, որ մի քանի ամիս անց, երբ կարողացել է կապ հաստատել փաստաբան Իրինա Մանուկյանի հետ, վերջինս ասել է, որ գործն ընթացքի մեջ է:

Դիմողը հայտնել է, որ 2016թ. մայիսի 10-ին ընդունվել է որոշում, որի համաձայն իրենց կողմից պետական բյուջե ենթակա էր վճարման 38.745 ՀՀ դրամ գումար, որի բռնագանձման համար Դիմողի և իր դստեր բանկային հաշիվների վրա արգելանք է դրվել: Դիմողը զանգահարել է այդ մասին Իրինա Մանուկյանին տեղեկացնելու համար, ով խոստացել է, որ կզբաղվի այդ հարցով: Սակայն, արդյունքում Դիմողը վճարել է այդ գումարը, քանի որ արգելանքը կիրառվել էր Դիմողի երեխաների՝ կերակրողին կորցնելու հիմքով վճարվող կենսաթոշակի նկատմամբ:

Դիմողը նաև հայտնել է, որ ամբողջ ժամանակահատվածում փաստաբան Իրինա Մանուկյանը Դիմողի զանգերին պատասխանել է շատ քմահաճ, Դիմողն օրերով սպասել է փաստաբանի զանգին: Բացի այդ, Դիմողը նշել է, որ երբ Իրինա Մանուկյանը չի պատասխանել իր զանգերին, Դիմողն իր որդու հեռախոսահամարից է զանգահարել փաստաբանին և նա պատասխանել է: Դիմողը փաստաբանից պահանջել է անմիջապես իր գործով զբաղվել, այլապես կբողոքի, իսկ փաստաբանը պատասխանել է Դիմողին անել այն ինչ ցանկանում է:

Դիմումին կից ներկայացվել է փաստաբան Իրինա Մանուկյանի և Դիմողի միջև 23.06.2014թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի, «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունքի 10.05.2016թ. որոշման և պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենները:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

2016 թվականի օգոստոսի 22-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Իրինա Մանուկյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 372-Ա/ԿԳ-16081 որոշումը, համաձայն որի որոշվել է կարգապահական վարույթ հարուցել Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.6.1, 2.7.2 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

25.08.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Համլետ Ստեփանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը հայտնել է, որ 2014թ. հունիսի 23-ին փաստաբան Իրինա Մանուկյանի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, իսկ 2014թ. հունիսի 25-ին փաստաբանին բանկով վճարել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, քանի որ ըստ Դիմողի՝ փաստաբանը վստահեցրել է, որ առանց ծառայության գումարի վճարման անդորրագրի չի կարող հայցը ներկայացնել դատարան:

Դիմողը հայտնել է, որ Իրինա Մանուկյանն իրեն վստահեցրել է դատական գործի դրական ավարտի վերաբերյալ, քանի որ նախապես ծանոթացել է գործին և իբր պայմանավորվածություն է ունեցել հայցը քննող դատավորի հետ: Դիմողը նաև նշել է, որ Իրինա Մանուկյանը խոստացել է իրեն, որ փաստաբանական ծառայությունների վճարի 3/4-րդ մասը հայցը բավարարվելուց հետո պետք է հետ ստանա պատասխանող կողմից և վերադարձնի Դիմողին:

Դիմողը նշել է, որ մեկ տարի տարբեր պատճառաբանություններով ձգձգելուց հետո Իրինա Մանուկյանը հայցը ներկայացրել է դատարան 2015 թվականի հունիսին:

Դիմողը հայտնել է, որ դատարանն իր հայցապահանջը մերժել է, իսկ փաստաբան Իրինա Մանուկյանը հայտնել է, որ պետք է գործը ներկայացնի վերաքննիչ դատարանում:

Փաստաբան Իրինա Մանուկյանը թիվ ՍԴ/0829/02/15 քաղաքացիական գործով վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, սակայն այն վերադարձվել է, քանի որ ներկայացված է եղել թերություններով, իսկ վերաքննիչ դատարանը տվել է ժամկետ թերությունները վերացնելու համար, սակայն փաստաբան Իրինա Մանուկյանն այդ ժամանակահատվածում կալանավորվել է:

Դիմողը հայտնել է, որ մի քանի ամիս անց, երբ կարողացել է կապ հաստատել փաստաբան Իրինա Մանուկյանի հետ, վերջինս ասել է, որ գործն ընթացքի մեջ է:

Դիմողը հայտնել է, որ 2016թ. մայիսի 10-ին ընդունվել է որոշում, որի համաձայն իրենց կողմից պետական բյուջե ենթակա էր վճարման 38.745 ՀՀ դրամ գումար, որի բռնագանձման համար Դիմողի և իր դստեր բանկային հաշիվների վրա արգելանք է դրվել: Դիմողը զանգահարել է այդ մասին Իրինա Մանուկյանին տեղեկացնելու համար, ով խոստացել է, որ կզբաղվի այդ հարցով: Սակայն, արդյունքում Դիմողը վճարել է այդ գումարը, քանի որ արգելանքը կիրառվել էր Դիմողի երեխաների՝ կերակրողին կորցնելու հիմքով վճարվող կենսաթոշակի նկատմամբ:

Դիմողը նաև հայտնել է, որ ամբողջ ժամանակահատվածում փաստաբան Իրինա Մանուկյանը Դիմողի զանգերին պատասխանել է շատ քմահաճ, Դիմողն օրերով սպասել է փաստաբանի զանգին: Բացի այդ, Դիմողը նշել է, որ երբ Իրինա Մանուկյանը չի պատասխանել իր զանգերին, Դիմողն իր որդու հեռախոսահամարից է զանգահարել փաստաբանին և նա պատասխանել է: Դիմողը փաստաբանից պահանջել է անմիջապես իր գործով զբաղվել, այլապես

կբողոքի, իսկ փաստաբանը պատասխանել է Դիմողին անել այն ինչ ցանկանում է: Դիմումին կից ներկայացվել է փաստաբան Իրինա Մանուկյանի և Դիմողի միջև 23.06.2014թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի, «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունքի 10.05.2016թ. որոշման և պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենները:

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին Դիմողը ներկայացել է և տվել է նույնաբովանդակ բացատրություն:

3.2.Պատասխանողի համառոտ բացատրությունը.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Իրինա Մանուկյանից Մետաքսյա Տեր-Պետրոսյանի դիմումի վերաբերյալ պահանջվել է բացատրություն, որը փաստաբանի կողմից ներկայացվել է 22.08.2016 թվականին:

Փաստաբան Իրինա Մանուկյանը բացատրությամբ հայտնել է, որ Մետաքսյա Տեր-Պետրոսյանի հետ պայմանագրային հարաբերություններում իր կողմից որևէ խոստում գործի դրական ելքի վերաբերյալ չի եղել, իսկ դատավորի հետ պայմանավորվածություն ունենալու հանգամանքը փաստաբանը որակել է որպես զրպարտություն:

Փաստաբանական վճարի հետ կապված, Իրինա Մանուկյանը նշել է, որ ընդամենը դիմողին պարզաբանել է իրավական դրույթը դատական ծախսերի մասին հայցի բավարարման դեպքում:

Դիմողի հայցը մերժելու մասին դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու հետ կապված, փաստաբան Իրինա Մանուկյանը հայտնել է, որ իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանի կողմից հետ է վերադարձվել թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու նպատակով: Որոշումն Իրինա Մանուկյանն օբյեկտիվ պատճառներով չի ստացել, քանի որ գտնվել է անազատության մեջ:

Իրինա Մանուկյանը հայտնել է, որ հետագայում նշված հիմքով իր կողմից կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք և միջնորդություն բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի ճանաչելու մասին, սակայն ներկայացված միջնորդությունը վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է: Ըստ փաստաբանի՝ նա նշված որոշումը դեռ չի ստացել և այդ մասին տեղեկացել է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից:

Դիմողի հեռախոսազանգերին չպատասխանելու վերաբերյալ փաստաբան Իրինա Մանուկյանը նշել է, որ փաստաբանը պարտավոր չէ ցանկացած պահին պատասխանել վստահորդի հեռախոսազանգերին, սակայն իրենց միջև եղել է պարբերական հեռախոսակապ, որի միջոցով Դիմողը տեղեկացվել է գործի ընթացքի մասին:

Փաստաբան Իրինա Մանուկյանը գտել է, որ դիմումում նշված հանգամանքներն անհիմն են և նպատակ են հետապնդում արատավորելու իրեն որպես փաստաբանի:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն ներգրավվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Համլետ Ստեփանյանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2016 թվականի հոկտեմբերի 12-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«*Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստը, սույն եզրակացությունը ներկայացվում է Պալատի խորհրդին*»:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

13.10.2016թ. գործը հանձնվել է Խորհրդին: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի ապրիլի 04-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

2014թ. հունիսի 23-ին Դիմողը փաստաբան Իրինա Մանուկյանի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Փաստաբան Իրինա Մանուկյանը թիվ ՍԴ/0829/02/15 քաղաքացիական գործով վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերադարձրել է վերաքննիչ բողոքը՝ տրամադրելով ժամկետ առկա թերությունները վերացնելու համար, սակայն փաստաբան Իրինա Մանուկյանը չի վերացրել այդ թերությունները:

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա թիվ ՍԴ/0829/02/15 քաղաքացիական գործի քաղվածքում (**այսուհետ՝ Քաղվածք**) արտացոլված է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 11.12.2015թ. որոշումը, որից բխում է, որ հայցվորների ներկայացուցիչ Իրինա Մանուկյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է, քանի որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված չեն եղել բողոքի

պատճենը պատասխանող Սպարտակ Հայրապետյանին ուղարկելու, պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցներ, ինչպես նաև չի ներկայացվել պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու միջնորդություն:

Քաղվածքից բխում է նաև այն, որ Դիմողի գործով փաստաբան Իրինա Մանուկյանը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.12.2015թ. որոշմամբ վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացրել է դատարան միայն 11.07.2015թ, երբ ինքն արդեն մոտ հինգ ամիս գտնվել է ազատության մեջ, և չի եղել վերաքննիչ բողոքը ներկայացնելու որևէ այլ օբյեկտիվ խոչընդոտ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 18.07.2016թ. որոշմամբ կրկին վերադարձրել է Իրինա Մանուկյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը՝ մերժելով վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բացթողելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ և վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Իրինա Մանուկյանի կողմից բերված միջնորդությունները:

Նշված փաստերն ապացուցվում են գործում առկա փաստաթղթերով, մասնավորապես՝ փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա թիվ ՍԴ/0829/02/15 քաղաքացիական գործի քաղվածքով, Կողմերի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.04.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Իրինա Մանուկյանը փաստաբան է հանդիսանում **12.06.2000թ**-ից: 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 10 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (ավարտված վարույթներ):

Տեղեկանքին կից ներկայացված հավելվածի համաձայն՝ 10 ավարտված վարույթներից չորսով փաստաբանի նկատմամբ նշանակվել է հիմնական տույժ՝ նկատողություն, որոնք արդեն իսկ մարվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Իրինա Մանուկյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2. ենթակետի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 2.6.1 և 3.6.1 ենթակետերի մասով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի *(այսուհետ՝ Օրենք)* ***39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:***

Համաձայն Կանոնագրքի 2.7.2 ենթակետի՝ *Փաստաբանը պարտավոր է*

վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրինա Մանուկյանը, լինելով փաստաբան, պարտավոր էր իմանալ, որ վերաքննիչ բողոք ներկայացնելիս անհրաժեշտ է բողոքին կցել նաև պատասխանողին ուղարկելու, պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցները, ինչը չի արվել և որի պատճառով բողոքը հետ է վերադարձվել:

Խորհուրդը նաև հաստատված է համարում այն փաստը, որ փաստաբան Իրինա Մանուկյանը ժամանակավորապես՝ մինչև 2017թի փետրվար ամիսը, գտնվել է անազատության մեջ, ինչը ժամանակավորապես զրկել է իրեն իր հաճախորդի շահերը պատշաճ ներկայացնելու հնարավորությունից. այն է՝ վերաքննիչ բողոքի թերությունները վերացնելը և նորից ներկայացնելը: Թեև Խորհուրդը հարկ է համարում ընդգծել, որ դա օբյեկտիվ պատճառ չի կարող հանդիսանալ, քանի որ փաստաբանը՝ որպես սոցիալական համապատասխան պատասխանատվություն կրող անձ իրենից կախված ամեն ինչ պետք է կատարի հաճախորդի շահերը պատշաճ ներկայացնելու համար:

Վերաքննիչ բողոքը նորից ներկայացվել է 11.07.2015թ, երբ ինքն արդեն մոտ հինգ ամիս գտնվել է ազատության մեջ, և չի եղել վերաքննիչ բողոքը ներկայացնելու որևէ այլ օբյեկտիվ խոչընդոտ:

Խորհրդին չի ներկայացվել վերաքննիչ բողոքի վերոնշյալ թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու համար այդքան երկարատև ժամանակահատված կորցնելու որևէ պատճառաբանություն կամ հարգելի համարելու հիմքեր:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Իրինա Մանուկյանը պարտավոր էր վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչն ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, որը չի դրսևորվել, վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում, ինչը չի կատարվել:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պատասխանողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առել վերոհիշյալ հանգամանքները:

Փալատի խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 2.6.1 և 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման, քանի որ տվյալ կարգապահական գործով հաստատված փաստերի և դրանք հիմնավորող ապացույցների ուսումնասիրության արդյունքում Պալատի խորհուրդը չի կարող

հետևության հանգել փաստաբանի կողմից նման խախտումներ կատարելու վերաբերյալ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի և 3-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Իրինա Մանուկյանի (արտոնագիր թիվ 392) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6.1 և 3.6.1 պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16081 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Իրինա Մանուկյանին (արտոնագիր թիվ 392) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 ենթակետի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Իրինա Մանուկյանի (արտոնագիր թիվ 392) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին սույն որոշումը ստանալու պահից 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, վեց ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տարոն Սիմոնյան